

Սերգեյ Քոչարյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հասարակության մեջ հարաբերությունները բնութագրվում են իրենց բազմակողմանիությամբ: Դրանց սրընթաց զարգացումը պատճառ է դառնում միջսուբյեկտային փոխազդեցության նորանոր տեսակների ծագման, որոնց անհրաժեշտ է պետական ճանաչում: Հասարակական հարաբերությունների կարգավորվածությունը տեղի է ունենում պետության կողմից սահմանված պարտադիր կանոնների միջոցով: Այդպիսի կանոններն ունենում են արտաքին արտահայտվածություն նորմատիվ իրավական կամ իրավակիրառ ակտերի ձևով:

Իրավական նորմերի սահմանումն աշխատատար գործընթաց է, որը կազմված է բազմաթիվ գործողություններից, որոնց արդյունքում հաստատվում է այս կամ այն հարաբերության իրական նշանակությունը: Իդեալական նորմ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր այն պահերը և նրբությունները, որոնք կարող են ազդել դրա բովանդակության և իմաստի վրա, այդպիսի նորմեր ստեղծելիս պահպանել համապատասխան տեխնիկան:

Իրավաբանական գործունեությունն ունի կիրառման լայն բնագավառ, որն իր արտացոլումն է գտնում շատ հասարակական երևույթներում: Այդ սպեկտրը բավականին ընդարձակ է, քանի որ կենսական իրադրությունների մի ճնշող քանակ կարգավորվում է իրավունքով: Դրա հետ միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ իրավաբանական գործունեությունը և իրավական գործունեությունը ոչ միանշանակ հասկացություններ են: Ինչպես նշում է Ռ.Վ. Շագինան, իրավական գործունեությունն ավելի լայն հասկացություն է, և այն իրականացնում են իրավունքի բոլոր այն սուբյեկտները, որոնք իրավունքի նորմի հիման վրա բավարարում են իրենց բազմազան պահանջմունքները կյանքի տարբեր բնագավառներում: Իսկ իրավաբանական գործունեությունն իրավաբանի մասնագիտության հետ կապ-

ված հանրային անձանց արտոնությունն է¹: Իրականում սխալ կլինի իրավաբանական գործունեություն համարել խանութից գրքեր գնելը կամ կոմունալ ծախսերի վճարումը: Այսպիսի գործողություններ կարող է իրականացնել ցանկացած անձ:

Իրավաբանական գործունեությանը հատուկ է խիստ որոշակիություն, իրավաբանների կողմից կատարվող գործողությունների հաջորդականություն: Դա առաջին հերթին պայմանավորված է այդպիսի գործունեության բարդությամբ և հասարակական բարձր նշանակությամբ: Այդ պատճառով իրավաբանը պետք է գործի այնպես, առավելագույնս խուսափի սխալներից: Այդ դեպքում իրավաբանական գործունեության որակի վրա ազդող էական գործոն է համարվում տեխնիկական կանոնների, միջոցների, հնարքների ամբողջությունը:

«Տեխնիկա» տերմինն սկզբունքորեն հատուկ չէ իրավունքին: Այն առավելապես կիրառվում է գիտելիքների «տեխնիկական» բնագավառներում: Այնուամենայնիվ, իրավունքը կարող է իր մեջ ներառել առաջին հայացքից չկապակցվող երևույթներ: Չէ՞ որ հենց իրավունքի կողմից են կարգավորվում քաղաքական, տնտեսական, արտադրական և այլ բնագավառներ (նորմատիվ իրավական ակտեր ընդունելու և իրացնելու միջոցով):

Այսօր կենսական պահանջմունքներն իրավաբանին թելադրում են մասնագետ լինել ոչ միայն իրավունքի բնագավառում, այլև ինչ-որ չափով իմանալ հաշվապահություն, աուդիտ և անգամ մաթեմատիկա: Այս առումով Վ.Վ. Լազարևը նշում է, որ իրավաբանը չի կարող ետ մնալ գիտության վերջին ձեռքբերումներից²:

Իրավական կարգավորմանը պատկանում են այն հարաբերությունները, որոնք ունեն բացառապես կարևոր նշանակություն հասարակության և պետության համար: Կարգավորման այդ գործընթացը հանգում է ոչ թե այս կամ այն օրերի ընդունմանը, այլ կրում է ամբողջական, համակարգված բնույթ: Իրավունքի էությունն այնպիսին է, որ դրա արդյունավետ գործունեությունը կախված է շատ բաղադրամասերից, որոնք հաշվի չառնելը կամ արհամարհելը պարզապես

¹ Ст'ю Шагуева Р.В., Правовая деятельность и ее разновидности в современном российском обществе // Журнал российского права. 2004. N 10, էջ 91:

² Ст'ю Лазарев В.В., Примимение норм советского права, Казань, 1972, էջ 149:

ճիշտ չէ: Այդպես էլ ցանկացած բժիշկ պետք է տիրապետի սպառնիչ բժշկական գիտելիքների, որպեսզի ժամանակին օգնություն ցուցաբերի հիվանդին: Այդ իմաստով ցանկացած կատեգորիա ունի իրավունքին հատուկ նշանակություն: Ասվածը հավասարաչափ կիրառելի է ինչպես իրավաբանական տեխնիկայի, այնպես էլ դրա առանձին տեսակների համար: Ավելին, Գ.Ի. Մուրոմցևը, քննարկելով «իրավաբանական տեխնիկա» հասկացության ծագումնաբանության հիմնահարցը, նշում է, որ պատմական տրամաբանության տեսանկյունից իրավունքը և իրավաբանական տեխնիկան պետք է ծագեն միաժամանակ: Չէ՞ որ իրավունքի ծագման գործընթացն արտացոլում է նախևառաջ իր ներքին ինքնակազմակերպման զարգացումը, որի արդյունքը դառնում է իրավունքի հայտնի «կոնստրուկցիան», այսինքն՝ դրա ներքին կառուցվածքը և արտաքին արտահայտման ձևը (միկրոհամակարգից մինչև մակրոմակարդակ): Հենց դա էլ ընդհանուր առմամբ իրավունքի տեխնիկան է կամ տեխնիկան իրավունքում կամ էլ իրավաբանական տեխնիկան¹:

Սովետական իրավաբանական գրականության մեջ իրավաբանական տեխնիկայի տարբեր հիմնահարցերին են նվիրված Դ.Ա. Քերիմովի², Ա.Ա. Ռիշակովի³, Ա.Ս. Պիգոլկինի⁴, Ս.Ս. Ալեքսեևի⁵, Ն.Ա. Վլասենկոյի⁶, Յու.Ա. Տիխոմիրովի⁷, Վ.Ս. Սիրիխի⁸, Բ.Բ. Իսակովի⁹, Վ.Ս.

¹ Ст'я Муромцев Г.И., Юридическая техника (некоторые теоретические вопросы) // Известия высших учебных заведений. Правоведения. 2000. № 1, էջ 10:

² Ст'я Керимов Д.А., Кодификация и законодательная техника. – М., 1962:

³ Ст'я Ушаков А.А., О понятии юридической техники и ее основных проблемах. – Пермь. 1961:

⁴ Ст'я Пиголкин А.С., Совершенствование законодательной техники // Советское государство и право, - 1968. – № 1:

⁵ Ст'я Алексеев С.С., Общая теория права Т. 2. – М., 1982:

⁶ Ст'я Власенко Н.А., Язык права. – Иркутск, 1997:

⁷ Ст'я Тухомиров Ю.А., Законодательная техника: понятие и элементы / В кн.: Законодательная техника (гл. 1) / Под ред. Ю.А. Тухомирова. – М., 2000:

⁸ Ст'я Сырых В.М., Методологические основы правотворчества / В кн.: Законодательная техника (глава 2) / Под ред. Ю.А. Тухомирова. – М., 2000:

⁹ Ст'я Исаков В.Б., Стадии подготовки проектов законов / В кн.: Законодательная техника (глава 4) / Под ред. Ю.А. Тухомирова. – М., 2000:

Բարանովի¹ և այլոց աշխատությունները:

Իրավաբանական տեխնիկայի հասկացության հարցում գիտնականների տեսակետներում առաջին հայացքից տարածայնություններ չկան²: Ըստ Ս.Ս. Ալեքսեևի՝ իրավաբանական տեխնիկան միջոցների և հնարքների ամբողջություն է, որոնք, կանոններին համապատասխան, կիրառվում են իրավական (նորմատիվ) ակտերի մշակման և համակարգման ժամանակ³:

Ա.Ֆ. Չերդանցևն իրավաբանական տեխնիկան բնորոշում է որպես իրավաբանական փաստաթղթեր պատրաստելու, կազմելու, ձևակերպելու, դրանք համակարգելու և հաշվառելու կանոնների, հնարքների, եղանակների ամբողջություն⁴:

Չի կարելի ասել, որ իրավաբանական տեխնիկան հիմնավորապես այլ կերպ են հասկանում եվրոպացի գիտնականները: Օրինակ՝ ֆրանսիացի գիտնական Պ. Սանդեվարը տարբերակում է իրավաբանական տեխնիկան լայն իմաստով (միջոցների և մեթոդների ամբողջություն, որոնց օգնությամբ պետական մարմինների նպատակները տեղավորվում են իրավական նորմերի հունում և իրականացնում են դրանց գործնական կիրառման ճանապարհով) և նեղ իմաստով (դա իրավաբանական դատողությունների լեզվի և կառուցվածքի, ինչպես նաև տարբեր տեխնիկական հնարքների, միջոցների և կանոնների կիրառման պայմանն է)⁵:

Իրականում չկա միասնական կարծիք, թե ինչ վերագրել իրավաբանական տեխնիկայի հնարքներին, միջոցներին: Ավելին, որոշ հեղինակներ տարբերություն չեն տեսնում միջոցների, հնարքների,

¹ Տե՛ս Баранов В.М., Концепция законопроекта. – Н. Новгород, 2003:

² Սակայն իրավաբանական տեխնիկայի սահմանման հարցում դժգոհություն, որը ռուսական իրավաբանական գիտության մեջ ձեռք է բերել կայուն բնույթ և սկսել է տեղափոխվել մի դասագրքից մյուսը, արտահայտել են շատ գիտնականներ, որոնք հավաքվել էին գիտական կոնֆերանսի Նիժնի Նովոգորոդում՝ 1999թ. սեպտեմբերին (Վ.Ս. Բարանով, Վ.Ն. Կարտաշով և այլն): Ելույթներում զգացվում է տվյալ հիմնախնդրի ուսումնասիրության մեջ ճեղքեր առաջանալու ճգտում: Առաջարկվեց մտորել. «իրավաբանական տեխնիկան հնարքներ, եղանակներ, մեթոդներ, միջոցներ են...», պարզել, թե վերջապես ինչն է այդ հասկացությունների միջև տարբերությունը, և ինչպես կարելի է դրանք դասակարգել: Տե՛ս Проблемы юридической техники. / Под ред. В.М. Баранова. - Н. Новгород, 2000:

³ Տե՛ս Алексеев С.С. Общая теория права. Т. 2. – М., 1982, էջ 267:

⁴ Տե՛ս Черданцев А.Ф. Теория государства и права. М., 1999, էջ 366:

⁵ Տե՛ս Сандевуар П. Введение в право. М., 1994, էջ 135:

եղանակների և մեթոդների միջև:

Իրավաբանական տեխնիկայի զարգացման գործում գիտական մեծ ներդրում է կատարել պրոֆեսոր Տ.Վ. Կաշանինան, որի շնորհիվ իրավաբանական տեխնիկան կարելի է քննարկել ոչ միայն որպես ինքնուրույն գիտական ուղղություն իրավունքի տեսության մեջ, այլ նաև որպես ամբողջական ուսումնական դասընթաց: Դրա շնորհիվ իրավագիտության մեջ ձևավորվել է կարծիք, որ իրավաբանական տեխնիկան ոչ միայն միջոցների, հնարքների, կանոնների հավաքածու է, այլև գիտականորեն հիմնավորված իմացությունների ամբողջություն այն մասին, թե ինչպես կատարել իրավաբանական աշխատանք:

Այսպես, Տ.Վ. Կաշանինան, քննարկելով իրավաբանական տեխնիկան որպես գիտական իմացությունների համակարգ, նշում է, որ դրա խնդիրն է հիմնականում իրավաստեղծագործության և իրավակիրառման բնագավառում օբյեկտիվ իրականության ուսումնասիրությունը, իրավաբանական գործունեության այդ երկու տեսակների միջև կապերի հաստատումը (ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի մեջ) և տվյալ բնագավառում գոյություն ունեցող օրինաչափությունների սահմանումը: Այսպիսով, կարելի է փաստել, որ իրավաբանական տեխնիկան ունի գիտական-ճանաչողական նշանակություն¹:

Առարկան և մեթոդը հանդես են գալիս որպես ընդհանուր գիտական կատեգորիաներ, որոնք սահմանազատում են մի գիտությունը մյուսից: Իրավունքի տեսության գիտության շրջանակներում առարկան և մեթոդը որոշում են առանձին իրավական կառույցի իմացաբանական և գործնական նշանակությունը: Իրավաբանական տեխնիկայի առարկան, որն ուսումնասիրվում է իրավունքի տեսության շրջանակներում, Տ.Վ. Կաշանինայի կարծիքով, իրավաբանական գործունեություն իրականացնելու առավել ընդհանուր օրինաչափություններն են, իսկ մեթոդաբանական իրավաբանական գործունեության հետազոտման ելակետային գիտական մոտեցումների, ինչպես նաև այն իրականացնելու հնարքների, միջոցների ամբողջությունն է²:

Իրավաբանական գրականության մեջ չկա միասնական կարծիք

¹ Տե՛ս Кашанина Т.В., Юридическая техника: учебник - М.: Эксмо, 2007, էջ 25:

² Տե՛ս Кашанина Т.В., Юридическая техника: учебник - М.: Эксмо, 2007, էջ 25:

ո՛չ տեխնիկայի մասերի քանակի, ո՛չ էլ այս կամ այն մասի իմաստի վերաբերյալ:

Քանակական իմաստով նկատվում են գիտնականների այնպիսի դիրքորոշումներ, որոնց համաձայն՝ իրավաբանական տեխնիկայի մասերին են վերագրվում մեթոդները, կանոնները, հնարքները և միջոցները¹: Գ.Ի. Դենիսովն իրավաբանական տեխնիկայի մասեր է համարում կանոնները, հնարքները, միջոցները, եղանակները և մեթոդները²: Դ.Վ. Չուխվիչևը, անդրադառնալով օրենսդրական տեխնիկայի հասկացությանը, որպես դրա մասեր առանձնացնում է սկզբունքները՝ ընդ որում բացառելով միջոցներն ու կանոնները³, իսկ Ե.Գ. Միրոշնիկովը որպես մասեր թվում է միայն կանոնները, հնարքները և եղանակները⁴:

Իրավաբանական գրականության մեջ իրավաբանական տեխնիկայի կառուցվածքի, այսինքն՝ այն բաժինների մասնատելու մասին առաջինը գրել է Ս.Ս. Ալեքսեևը⁵: Նրա կարծիքով տեխնիկական միջոցներ են, օրինակ՝ իրավաբանական կառուցվածքները, տերմինաբանությունը և այլն, իսկ իրավական տեխնոլոգիա հարկ է համարել նորմերի շարադրման եղանակները, օրինակ՝ հղումների համակարգը:

Ն.Ա. Վլասենկոն ենթադրում է, որ իրավաբանական տեխնոլոգիան պատասխանում է այն հարցին, թե ինչպես անել, ինչ հաջորդականությամբ իրականացնել այս կամ այն գործողությունը, իսկ իրավաբանական տեխնիկան՝ ի՞նչ հնարքներով և միջոցներով պետք է իրականացվի այս կամ այն տեխնոլոգիական գործողությունը⁶:

Իրավաբանական տեխնիկա հասկացությունը վերաիմաստավորելու ուղղությամբ հեղափոխական փորձ է կատարել Վ.Ն. Կարտա-

¹ Ст'ю Керимов Д.А., Законодательная техника. М., 1998, էջ 18:

² Ст'ю Денисов Г.И., Юридическая техника: теория и практика // Журнал российского права. 2005. N 8, էջ 91:

³ Ст'ю Чухвичев Д.В., Законодательная техника: учеб. пособие. М., 2006, էջ 21:

⁴ Ст'ю Мирошников Е.Г., Ясность и точность как требования к языку закона // В кн.: Проблемы юридической техники / Под ред. В.М. Баранова. - Н. Новгород, 2000, էջ 39:

⁵ Ст'ю Алексеев С.С., Указ. соч., էջ 268:

⁶ Ст'ю Власенко Н.А., Законодательная технология: Теория. Опыт. Правила. - Иркутск, 2001, էջ 9:

շովը¹: Նա առաջարկում է իրավաբանական աշխատանք կատարելու կանոնների բնութագրման համար ավանդական «իրավաբանական տեխնիկա» տերմինի փոխարեն օգտագործել այլ, իր կարծիքով ավելի ընդհանուր տերմին՝ «իրավաբանական տեխնոլոգիա»: Ըստ նրա՝ իրավաբանական տեխնոլոգիան բաղկացած է երեք մասերից.

- իրավաբանական տեխնիկա՝ գործնական նպատակներին հասնելու միջոցներ. ընդհանուր սոցիալական (լեզու, տառեր, թվեր, հասկացություններ, դատողություններ, նորմեր և այլն), հատուկ-իրավաբանական (իրավական հասկացություններ, կառուցվածքներ, իրավական կարգադրություններ, նորմատիվ ակտեր և այլ իրավական երևույթներ), տեխնիկական (համակարգիչներ, ֆոտոխցիկներ և այլն),

- իրավաբանական տակտիկա՝ իրավաբանական պրակտիկայի հնարքների, միջոցների և մեթոդների գումարային ամբողջություն կամ այն կազմակերպելու և պլանավորելու հիմունքներ,

իրավաբանական ստրատեգիա՝ գլխավոր, առավել էական և վերջնական խնդիրներին և նպատակներին հասնելու միջոցներ: Այլ կերպ ասած, դա իրավաբանական պրակտիկայի հեռանկարային պլանավորումն ու կանխատեսումն է:

Իրավաբանական տեխնիկայի կառուցվածքի վերաբերյալ բավականին հետաքրքիր է Տ.Վ. Կաշանինայի տեսակետը, որի կարծիքով իրավաբանական տեխնիկայի միջոցների ամբողջությունը (նյութական բնույթը) կազմում է ըստ էության իրավաբանական տեխնիկան, իսկ իրավաբանական աշխատանքի մնացած բոլոր ասպեկտներն ունեն ոչ նյութական բնույթ և վերաբերում են այդպիսի աշխատանք կատարելու ունակությանը (արվեստին): Այդ բոլորը միասին (հնարքներ, եղանակներ, մեթոդներ) ճիշտ կլինի անվանել իրավաբանական տեխնոլոգիա, որն իրավաբանական տեխնիկայի մասն է²:

Իր «տեսակարար կշռով» իրավաբանական տեխնոլոգիան բացահայտորեն գերակակշռում է: Իրավական աշխատանքում բարձր

¹ St'u Карташов В.Н., Юридическая техника, тактика, стратегия, технология (к вопросу соотношения) / В кн.: Проблемы юридической техники. Т. 1. էջ 16-23; Նույն հեղինակի Законодательная технология: понятие, основные элементы, методика преподавания / В кн.: Законодательная техника современной России: состояние, проблемы, совершенствование. Т. 1, էջ 24-31:

² St'u Кашанина Т.В., Юридическая техника: учебник - М.: Эксмо, 2007, էջ 81:

են ոչ թե նյութական, այլ հենց մտավոր ծախսերը (գիտելիքներ, հմտություններ, վարպետություն, փորձ):

Ըստ Տ.Վ. Կաշանինայի՝ իրավաբանական տեխնիկայի միջոցները նյութական իրեր են, օբյեկտներ, որոնց հետ իրավաբանական աշխատանքի ժամանակ կատարվում են բարդ գործողություններ դրված նպատակին հասնելու համար՝

- օրենքների տեքստեր, որոնք անհրաժեշտ է կատարելագործել, հրապարակել, համակարգել,

- ամսագրեր, լրագրեր, որտեղ հրապարակվում են նորմատիվ ակտերը կամ դրանց տպագրության մեջ օգտագործվող բազմացնող տեխնիկայի միջոցներ,

- բացիկներ, ներդիրներ, ամսագրեր, գրքեր, տետրեր, անջատվող էջեր, եթե խոսքը գնում է նորմատիվ ակտերի համակարգման մասին,

- դատական որոշման կամ այլ իրավաբանական փաստաթղթեր գրելու համար օգտագործվող համակարգիչներ,

- դեպքի վայրում իրերի տեղադրությունը ֆիքսելու համար օգտագործվող ֆոտոխցիկներ և այլն:

Այն ամենը, ինչը վերաբերում է միջոցներին, դրանք մարդու կողմից արհեստականորեն ստեղծված օբյեկտներ են և գոյություն ունեն օբյեկտիվորեն: Պարզ ասած, դրանք կարելի է շոշափել և օգտագործել սեփական գործունեության ժամանակ: Դրանցից որոշներն օգտագործվում են ոչ միայն իրավական աշխատանքում: Սակայն սա հիմք չէ մերժելու դրանք և չնկատելու իրավաբանական տեխնիկայի գիտական տեսության կառուցման ժամանակ: Առավել ևս, որ դրանք իրավաբանական պրակտիկայում օգտագործվում են և կօգտագործվեն:

Իրավաբանական տեխնիկայի հնարքները գործողություններ են, որոնք ընդունակ են կրկնվելու որևէ բան իրականացնելու ժամանակ, օրինակ՝ այլ նորմատիվ ակտին հղում կատարելու հնարքը, եղանակները էությանբ բարդ գործողություններ են, որոնք ներառում են իրենցում հնարքների ամբողջություն, իսկ մեթոդները նպատակին հասնելու, իրավական նյութի կամ իրավահարաբերությունների կանոնավորման ուղիներն են: Օրինակ՝ մարդը, որին վիրավորել են, կարող է պաշտպանել իր արժանապատվությունը երկակի ճանապարհով՝ կամ քրեաիրավական կարգով, կամ քաղաքացիաիրավա-

կան¹:

Մեր կարծիքով, իրավաբանական տեխնիկայի, մասնավորապես՝ իրավաբանական տեխնոլոգիայի կառուցվածքի մեջ հնարքների, եղանակների, մեթոդների հետ միասին պետք է ընդգրկել նաև սկզբունքներն ու կանոնները:

Իրավունքը և դրա առանձին ճյուղերն ունեն հիմնարար սկզբունքներ, որոնք արտահայտում են դրանց էությունը: «Սկզբունքներն իրավունքի օբյեկտիվ հատկություններն են: Դրանք արտացոլում են հասարակական զարգացման օրինաչափությունները, տվյալ հասարակության պահանջմունքները»²: Իրավունքի սկզբունքները կարելի է սահմանել որպես կենսական ուղեցիղեր, որոնցով առաջնորդվելով՝ իրականացվում է հասարակական հարաբերությունների կարգավորումը, սուբյեկտներն իրացնում են իրենց իրավունքները, պետությունը հարկադրում է իրավական պարտավորությունների կատարումը:

Իրավաբանական տեխնիկայի կառուցվածքում կանոնների առկայությունը կարելի է հիմնավորել հետևյալ փաստարկով. ցանկացած իրավական փաստաթղթի բովանդակությունն արտահայտված է իրավաբանորեն իմաստավորված որոշակի տեսքով, որը գրելու ընթացքում դժվար թե հարկավոր լինեն միայն իրավաբանական կանոններ: Այդ իմաստով ցանկացած իրավական միտք, գաղափար կախվածության մեջ է դրվում էությանը ոչ իրավական կանոններից, որոնց շարքում առաջնային տեղ են զբաղեցնում տրամաբանության, լեզվական կանոնները, որոնք կիրառելով, փաստաթղթում ցուցադրվում է անշոշափելի մտահանգման տեսքով: Իրավակիրառական տեխնիկայի կանոնների էությունը կայանում է որոշակի գործողությունների կատարման օրինաչափության մեջ, որոնք տևական պրակտիկայի ուժով դարձել են վարքագծի նմուշ, չափանիշ:

Ցանկացած գործունեության իրականացում, առավել ևս իրավական, հնարավոր չէ առանց ճիշտ մտածելու, որին օգնում է տրամաբանությունը: Կիրառելով տրամաբանության կանոնները՝ իրավակիրառման սուբյեկտը գտնում է առաջադրված հարցերի պատասխանները, որը նպաստում է ճիշտ որոշման կայացմանը: Տրամաբա-

¹ Տե՛ս Кашанина Т.В., Юридическая техника: учебник - М.: Эксмо, 2007, էջ 79-80:

² Տե՛ս Теория государства и права. Курс лекции / Под ред. Н.И. Матузожа и А.В. Малько. М. 1997, էջ 149:

նությունը տեխնիկական իմաստով անհրաժեշտ է ստացված տեղեկությունը փաստաթղթում ճիշտ շարադրելու համար: Ցանկացած եզրահանգում հիմնվում է կոնկրետ փաստերի, իրադարձությունների, տեղեկությունների վրա: Այդ պատճառով դատարանի որոշման մեջ եզրափակիչ մասը տեղադրվում է պատճառաբանական մասից հետո: Փաստաթղթի մասերը պետք է բացառեն միմյանց միջև հակասությունները, համաձայնեցված լինեն, յուրաքանչյուր հատված պետք է լինի նախորդի տրամաբանական շարունակությունը: Այսպիսով, տրամաբանական կանոններն ազդեցություն են թողնում փաստաթղթի կառուցվածքի վրա:

Իրավաբանական փաստաթղթի բովանդակությունն արտահայտված է իրավական միտք կրող տեքստի ձևով: Իրավաբանական փաստաթղթերը կազմելիս կիրառվում են հատուկ եզրույթներ, և այստեղ տրամաբանությունը պետք է հուշի օրենսդրին, իրավակիրառին, թե ինչ եզրույթ է անհրաժեշտ կիրառել առարկայի ճիշտ նշանակությունը տալու համար՝ դրանով բացառելով այլ իմաստներ: Այսպիսով, տրամաբանության կանոններն ազդում են նաև փաստաթղթի բովանդակության վրա:

Լեզվական կանոնները նախատեսված են իրավաբանական փաստաթղթերը գրագետ կազմելու համար: Այստեղ պետք է կիրառվեն ժամանակակից հայոց լեզվի գիտելիքները բառագիտության, հնչյունաբանության, բառակազմության, ոճաբանության, ձևաբանության վերաբերյալ:

Իրավունքը և դրա առանձին ճյուղերն ունեն հիմնարար սկզբունքներ, որոնք արտահայտում են դրանց էությունը: «Սկզբունքներն իրավունքի օբյեկտիվ հատկություններն են: Դրանք արտացոլում են հասարակական զարգացման օրինաչափությունները, տվյալ հասարակության պահանջունքները»¹: Իրավունքի սկզբունքները կարելի է սահմանել որպես կենսական ուղեմիջեր, որոնցով առաջնորդվելով և որոնց շրջանակներում իրականացվում է հասարակական հարաբերությունների կարգավորումը, սուբյեկտներն իրացնում են իրենց իրավունքները, պետությունը հարկադրում է իրավական պարտավորությունների կատարմանը:

¹ Տե՛ս Теория государства и права. Курс лекции / Под ред. Н.И. Матузожа и А.В. Малько. М. 1997, էջ 149:

Sergey Kocharyan

*Candidate of Legal Sciences, Docent, YSU Chair
of Theory and History of State Law*

ISSUES OF STRUCTURE OF THE LEGAL TECHNIQUE

In legal techniques, particularly in the structure of legal technology together with the tricks, modes and methods principles and rules should also be included. The right and its separate branches have fundamental principles that express their essence. The principles of the right can be defined as vital guideline, guided by which the regulations of social relations are actualized, the state imposes to keep legal obligations.

In the structure of legal techniques the existence of the rules can be substantiate by the following arguments. The content of any legal document is expressed in certain legally formulated way, during which not only legal rules are needed.

The essence of legal techniques consist in patterns of certain actions, which have become sample and criterion of behavior by strength of the long term practice.

The realization of any activity, especially legal one, is not possible without right thinking and this process is leaded by logic. Using the rules of logic the subject of law enforcement finds the answers of the given questions, which contributes to make the right decision. The logic is necessary to compose the obtained information in documents in the right way.

The content of legal document is expressed as a text containing legal idea. Making legal documents special terms are used, and here logic should prompt the legislator and the right user what term should be used to give the right meaning of the object thus excluding other meanings. So the rules of logic affect the content of the document.

Linguistic rules are to form the legal documents competently. Here should be used knowledge of lexicology, phonetics, stylistics, morphology of modern Armenian.